

ՄԻՍԵՈՆ Ա ԵՐԵՎԱՆՑԻՆ ՈՐՊԵՍ ՄԱՏԵՆԱԳԻՐ

18-րդ դարը հայ ժողովրդի համար առանձնահատուկ էր հատկապես մտավոր զարգացման առումով: 18-րդ դարի երկրորդ կեսին պետականության բացակայության պայմաններում հայ մտավոր զարգացման ծանր բեռը բաժին էր հասել հայ եկեղեցուն: Այս շրջանի մտավորականության ստվար զանգված էին կազմում հոգևորականները, ուստի և նրանք էին հայ գրավոր խոսքի տարածողն ու պահպանողը: Ինչպես նախորդ դարերում, 18-րդ դարում նույնպես Մայր աթոռը մտավոր կենտրոններից մեկն է: Էջմիածինում կրթվում և հոգևոր դաստիարակություն էին ստանում հայ գրական զարթոնքի կարկառուն ներկայացուցիչներ: Այդ հանճարեղ դպրոցի երևելի սաներից է համարվում նաև Միմեոն Երևանցին (1763-1780)թթ.: Նրա մատենագրական վաստակը հարուստ է և բազմաժանր: Ստանձնելով կաթողիկոսական պաշտոնը՝ (1763-1780)թթ. Երևանցին ոչ միայն սկսեց զբաղվել Մայր Աթոռի վարչական հարցերով, այլև որպես ուսյալ մարդ՝ նա ամեն ինչ արեց, որպեսզի Էջմիածինը դառնար ուսման և մտավորականության կենտրոն: Միմեոն Երևանցու ժամանակակիցները մեծ գովեստով են խոսել նրա մատենագրական վաստակի մասին: Երևանցուն իր ժամանակակիցները կոչել են բանիմաց և քաջ գիտնական: Երևանցու ժամանակը խիստ սուղ էր: Բազմազբաղ հայրապետը կարողանում էր ժամանակ գտնել մատենագրությամբ զբաղվելու և արժեքավոր գործեր ստեղծելու:

Միմեոն Երևանցին 18-րդ դարի հայ հեղինակների մեջ ունի իր պատվավոր տեղը, ուստի հարկ էնք համարում անդրադառնալ նրա թողած մատենագրական վաստակին՝ պարզելու, թե ինչ մտքորումներ է ունեցել մեծ մտածողը իր ժամանակի հուզող խնայիրների վերաբերյալ: Միմեոն Ա Երևանցու գրչին են պատկանում հետևյալ աշխատությունները.

1. *Գիրք Աղոթից, որ կոչի Զբօսարան հոգևոր*: Տպագրվել է Էջմիածինի սբ. Գրիգոր Լուսավորիչ տպարանում 1772 թվականին:

2. *Տաղարան փոքրիկ, շարահիւսեցեալ ի Միմեոն սրբազան կաթողիկոսէ հայոց յայլ և այլ ժամանակս*: Տպագրվել է Էջմիածինի սբ. գրիգոր Լուսավորիչ տպարանում 1777 թվականին:

Երևանցին իր ժամանակի աչքի ընկնող բանաստեղծներից մեկն էր: Նրա բանաստեղծական բարձր ձիրքը երևում է այս երկու փոքրիկ, բայց մեծ արժեք ունեցող աշխատություններում: Այս հիասքանչ աշխատությունները երգերի և տաղերի ժողովածուներ են: <<Տաղարան>> ժողովածուում ամենանշանավորը <<Արի Աստուած հարցն մերոյ>> երգն

է: Կարծիք կա, որ այս երգը երգվել է եկեղեցիներում հենց հեղինակի տնօրինությամբ <<Տէր ողորմեա>>-ի հետ մեկտեղ սբ. պատարագի ժամանակ:

*Արի Աստուած հարցըն մերոց
Որ Ապաւենդ ես նեղելոց.
Հաս յօգնութիւն ծառայից քոց
Անօգնական ազգիս Հայոց: Տէր ողորմեա՛ տէր ողորմեա՛:*

*Միջնորդութեամբ սրբոյ խաչիդ,
Եւ անարատ սուրբ ծնողիդ
Յիշեա՛ զնեղումն արեան փրկչիդ,
Ել ի խնդիր փառոյ հօտիդ: Տէր ողորմեա՛...*

*Զի գիտացաք մեր հաւաստեալ
Որ չափ մեղաց մերոց լըցալ,
Ուստի տէրդ մեր բարկացալ
Առ ի խրատել զմեզ զարթեալ: Տէր ողորմեա՛...*

*Արդ անկանիմք առաջի քո
Գոչեմք մեղայ Տեառնդ մերոյ,
Դարձո՛ ի մենջ զցասումն քո
Վասն անսպառ զթութեան քո: Տէր ողորմեա՛...*

3. Տոնացույց

Երևանցու կողմից տոնացույցի կարգավորումը մեծ աղմուկ բարձրացրեց հայ իրականության մեջ: Խնդիրն այն էր, որ հայ եկեղեցու Տոնացույցը, սկսած Գրիգոր Լուսավորիչից մինչև 17-րդ դարը, ենթարկվել էր անևշան փոփոխությունների: Կատարված փոփոխությունները հանգեցրել էին նրան, որ տոների կատարման ժամանակահատվածները հստակ չէին նշված, և այդ պատճառով խախտվում էր եկեղեցական տոների հաջորդականությունը: Որպեսզի վերջ տրվի այդ խառնիճադանջ վիճակին, Սիմեոն Ա. Երևանցին նախաձեռնեց կարգավորել Հայոց Տոնացույցը: Հայոց հին տոնացույցում օրերն ու ամիսները տարվա կտրվածքով հետ ու առաջ էին ընկնում, և դա հանգեցնում էր նրան, որ եկեղեցական տոները կորցնում էին իրենց հստակ հաջորդականությունը: Շատ հաճախ չէր իմացվում, թե ոչ տոնը երբ պետք է նշվի, և այդ պատճառով հավատացյալ հոտի մի մասը կարող էր մի տոն նշել, իսկ մյուս մասը՝ մեկ ուրիշ տոն: Տոնացույցի հետ կապված խառնաշփոթ վերացնելու համար Երևանցին այն բաժանում է երկու մասի. <<...նախ և առաջ նա Տոնացույցը երկու մասի բաժանեց, որոնցից երկրորդը 532

տարուայ շրջանով բաժանուած հայոց 36 տառերի վերայ (տաբեգիր-
ների վերայ)՝ որպէս ղեկավար և ուղեցոյց առաջին հատորի. այդ տա-
ռերից ամեն մէկը կառավարում է մի ամբողջ տարի. երկրորդ հատորը
մի համառոտ ցուցակ է, որ ցոյց է տալիս, թէ իւրաքանչիւր տարի տօները,
միջոց ուտիքները, պահքերը և այն ինչ կարգով են միմեանց յաջորդում.
իսկ առաջին հատորը երկրորդի բացատրութիւնն է, ևս պարունակում է
բոլոր տօները իրանց երգեցմունքներով բոլոր արարողութիւնների ման-
րամասնութիւններով>>՝: Երևանցին տոնացոյցը այնպէս վերափոխեց,
որ յուրաքանչյուր տոն առանց խախտման կրկնվում էր ամեն տարվա
նույն օրը: Ազգային կարևորագոյն տոներից շատերը կաթողիկոսը որո-
շեց նշել շաբաթ օրերին: Սակայն կաթողիկոսի կատարած փոփոխութիւն-
ների մեջ սա չէր էականը: Ամենակարևոր փոփոխութիւնը այն էր, որ
Երևանցին. <<Հայաստանեայց եկեղեցւոյ տօնէլի վարդապետաց շարքը
դասեց Ոսկիթոռ-միաբանասէրների դէմ քաջ ախոյեան երանելի Յովհան
Որոտնեցի և Մովսէս ու Գրիգոր Տաթևացի վարդապետներին>>²:

Տոնացոյցը բարեկարգելուց հետո Երևանցու հրամանով այն
տպագրվում է իր իսկ կողմից հիմնադրված Էջմիածինի սբ. Գրիգոր
Լուսավորչի անունը կրող տպարանում:

Կաթողիկոսը կարգավորած տոնացոյցը ուղարկում է տարբեր վայ-
րեր, որպէսզի այսուհետ բոլորն առաջնորդվեն այդ տոնացոյցով: Սակայն
կաթողիկ հայերը բողոքի ալիք բարձրացրին կապված նոր տոնացոյցի
հետ: Պատճառն այն էր, որ կաթողիկ եկեղեցուն դավանող հայերը չէին
համակերպվում այն փաստի հետ, որ Հովհան Որոտնեցու և Գրիգոր
Տաթևացու անունները մտցվել էին տոնացոյցի տօնէլի վարդապետների
շարքը. <<...որովհետև Որոտնեցու և Տաթևացիների այդքան մեծ պատուի
դնելը ախորժելի չէր մի բուռն կաթողիկ հայերին՝ նոքա աղմուկ հանեցին
Կ. Պոլիս նորա դէմ>>³: Սակայն նրանք Երևանցու կենդանության ժամա-
նակ ոչինչ չեն կարողանում անել, որպէսզի բարեփոխված տոնացոյցը
չմտնի կիրառության մեջ: Միայն Երևանցու մահվանից մի քանի տարի
անց կաթողիկ հայերը կարողացան հասնել նրան, որ արգելվեց Միմեոն
Երևանցու վերափոխած տոնացոյցի գործունեությունը: Բայց դա երկար
չտևեց: Որոշ ժամանակ անց կրկին վերականգնվեց Երևանցու բարեկո-
րոգած տոնացոյցը և մինչև այսօր երկրիս երեսին բնակվող բոլոր այն
հայերը, ովքեր պատկանում են Հայ Առաքելական եկեղեցու դավա-
նանքին, առաջնորդվում են հենց այդ տոնացոյցով:

¹ Դիան հայոց պատմութեան, գիրք Գ, Սիմեոն կաթողիկոսի Յիշատակարանը,
Թիֆլիս, 1894, էջ 82:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 82Ա:

Այսպիսով կարելի է նշել, որ Երևանցու հինգ տարվա քրտնաջան աշխատանքը տոնացույցը բարեկարգելու ուղղությամբ իզուր չանցավ. այն պսակվեց հաջողությամբ: Երևանցին, լինելով մեծ տոմարագետ, զբաղվեց մեր եկեղեցու տոմարի բարեկարգմամբ և եղավ վերջին կաթողիկոսը, ով բարեկարգեց հայ եկեղեցական տոմարը:

4. Կարգ թաղման Հայրապետաց, եպիսկոպոսաց և քահանայից. Տպագրվել է Էջմիածինի սբ. Գրիգոր Լուսավորչ տպարանում 1777 թվականին:

5. Քարոզագիրք. Այս աշխատությունը բաղկացած է երկու հատորից: Առաջին հատորում ներառված են ճառեր և ներբողներ, իսկ երկրորդ հատորում՝ քարոզներ:

6. Ջամբո. Սիմեոն Ա Երևանցու մատենագրական վաստակի մեջ <<Տոնացույցից>> հետո կարևոր տեղ է զբաղեցնում <<Ջամբո>>-ը: Երևանցին այս աշխատությունը գրել է 1765 թվականին, բայց այն տպագրվել է միայն 1873 թվականին: <<Ջամբո>> մատյանը Երևանցու մտավոր և հոգևոր գործունեության գլուխգործոցն է: Այս աշխատությունը գրելիս կաթողիկոսը ներկայանում է իբրև պատմագիր: <<Ջամբո>>-ը գրելիս Երևանցին փորձել է մակրամասնորեն ցույց տալ Մայր աթոռի կալվածատիրական և տնտեսական կարողությունները:

Երբ 1873 թվականին կաթողիկոս Գևորգ Դ Կոնստանդնուպոլսեցու (1866-1882) թթ. հրամանով Էջմիածինի տպարանում տպագրվեց Երևանցու <<Ջամբո>> աշխատությունը, տպագրության ժամանակ հրատարակիչի կողմից ավելացվում է <<Վասն Սիմեոնի կաթողիկոսի>> գլուխը: Սակայն այս գլուխը ավելացվել է ոչ թե իբրև հավելված, այլ որպես բնագրի մաս: Ուստի ընթերցողի մոտ կարող է թյուր կարծիք ստեղծվել, որ այս գլխի հեղինակը նույնպես Սիմեոն Երևանցին է: Սակայն դա այդպես չէ: <<Ջամբո>>-ը կարևոր է նաև նրանով, որ այստեղ Երևանցին հաղորդում է Էջմիածինի տիրախնամ թեմերի մասին վիճակագրական տեղեկություններ:

Երևանցու կողմից հեղինակած <<Ջամբո>>-ը մի շատ կարևոր աշխատանք է ապագա սերունդների համար, որոնք կարող են հստակ պատկերացում կազմել Մայր աթոռի կալվածատիրական հնարավորությունների և կարողությունների վերաբերյալ. <<...Ամբողջ հայոց գրականության մեջ նմանը չունեցող մի ընդարձակ բաժին է պարունակում <<Ջամբո>>-Էջմիածնի տնտեսական պատմությունը, որ հիմնված է կալվածագրերի շահերից, սուլթաններից և այլ տիրողներից արված թղթերի վրա: Սիմեոնը կարգի է բերել Էջմիածնի զիվանում պահվող բոլոր կալվածական գործերն ու թղթերը և նրանցով տալիս է մի ընդարձակ պատկեր, որի մեջ տեսնում ենք, թե որ կաթողիկոսները

փողով գնել են կալվածներ, իրենց ծախսով ջրանցքներ են շինել և այլ տնտեսական ձեռնարկություններ գլուխ բերել>>⁴: <<Ջամբո>> երբեք չի կորցրել իր կարևորությունը հայ հոգևոր և մտավոր կյանքում: Այս աշխատության կարևորության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ գիրքը 1930-ական թվականներին Ստեփան Մալխասյանցի գլխավորությամբ թարգմանվում է ռուսերեն լեզվով:

Որպեսզի աշխատությունը հետագայում հետաքրքրի ընթերցողին, հեղինակը այն անվանում է լատիներեն անունով, որը թարգմանաբար նշանակում է սենյակ. <<Ջամբո անունը, նոյնիսկ գաղղիերեն *Chambre* բառն է, որ կը նշանակէ սենեակ իր սովորական իմաստով, սակայն նախընթաց դարերու մեջ սենեակ կը կոչուէին Եւրոպիոյ պաշտօնական դիւանները, և դեռ այսօր ալ *Camera apostolica*, Առաքելական սենեակ կը կոչուի Հռոմի պապական դիւանը: Միմէն հարկավ այդ անունը լսած է Կ.Պոլիս գտնուած և Եւրոցացոց հետ շփում ունեցած միջոցին, և իբրև Եւրոպական կատարելագործեալ ձեռնարկ մը այդ անունը տուած է իր աշխատութեան, որ պարզապէս Դիւանագիշք կամ Դիւանական արձանագիրք մըն է>>⁵:

<<Ջամբո>> մատենը կազմված է հեղինակի կողմից գրված առաջաբանից և դրան հաջորդող քսանհինգ գլուխներից: Անդրադառնալով գրքի բովանդակային մասին՝ կարելի է նկատել, որ աշխատության առաջին տասներկու գլուխներում հեղինակը ներկայացնում է Հայ առաքելական եկեղեցու քաղաքական պատմությունը: <<Ջամբո>>-ի առաջաբանում կաթողիկոսը հաղորդում է, թե ինչքան մեծ կարևորություն ունի իր կողմից ձեռնարկված այս աշխատությունը: Երևանցին նաև հորդորում է ապագա սերունդներին, որպեսզի նրանք նույնպես շարունակաեն իր կողմից նախաձեռնած այս գործը, որ հետագայում հայ ժողովուրդը ունենա մի այսպիսի հիշատակարան՝ կապված իր և իր եկեղեցու հետ:

Աշխատության առաջին երեք գլուխներում հեղինակը համառոտ անդրադառնում է Մայր աթոռի վիճակին հիմնադրման օրերից մինչև 1441 թվականը: Համեմատաբար ավելի ծավալուն չորրորդ գլխում Երևանցին խոսում է Մայր աթոռի գահակալ կաթողիկոսների կատարած բարենորոգությունների մասին: Հեղինակը ներկայացնում է Մովսես Սյունեցուց (Տաթևացի) (1629-1632)թթ. մինչև Հակոբ Շամախեցի (1759-1763)թթ. գահակալ կաթողիկոսների կյանքը և նրանց կատարած գործունեությունը համառոտ: Հինգերորդ գլխում հեղինակը թվարկում է Մայր

⁴ Լեո, Երկ. ժող., հ.3, գիրք 2. Ե., 1973, էջ 463:

⁵ Մ. Օրմանեան, Ազգապատում, Ա հատոր, մասն Ա., Բ տպագրություն, Պեյրուր. ՏՊ ՍԵՒԱՆ, 1953, էջ 894:

աթոռի թեմերը: Այս գլխում Երևանցիին մանրամասնորեն նշում է, թե թեմերից յուրաքանչյուրը ինչքան և ինչ եկամուտ են ստացել, և այդ եկամուտների աղբյուրները որոնք են եղել: Այստեղ կարևոր է այն փաստը, որ թվարկված թեմերի տեղակուսները ունեն կարևոր պատմական նշանակություն: Վեցերորդ գլխում նույնպես խոսվում է Էջմիածնի տեղում թեմերի և նրանց եկամուտների մասին: Այդ թեմերը տեղաբաշխված էին թե՛ Օսմանյան կայսրության, թե՛ Պարսկաստանի, թե՛ Վրաստանի, և թե՛ ռուսական կայսրության տարածքներում: Այդ թեմերի գտնվելու վայրերը Երևանցին թվարկում է առանձին-առանձին՝ նրանց միացնելով այս կամ այն տարածքի կարևոր կենտրոնի շուրջ՝ իբրև վարչական առանձին միավոր: Յոթերորդ գլխում հեղինակը թվարկում է Վանի, Բայազետի, Կարսի Գեղարքունիքի, Լոռու, Թիֆլիսի, Նախիջևանի, Թավրիզի և Գանձակի շրջաններին պատկանող վայրերը: Մատյանի ութերորդ գլխում կաթողիկոսը պատմական փաստերով ցույց է տալիս, թե հայոց պետականության անկումը և դրա հետևանքով ազգային եկեղեցու հիմքերի թուլացումը ինչպիսի բացասական անդրադարձ ունեցան հայ ժողովրդի համար: Այդ դժվարին և խառնիճաղանջ պայմաններում առաջացան առանձին կաթողիկոսություններ և առաջնորդներ, որոնք իրենց գործունեությամբ էլ ավելի պառակտեցին հայ եկեղեցին, որից միայն օգուտ էին քաղում օտար նվաճողները:

Աշխատության տասներորդ գլխում հեղինակն անդրադառնում է այն փաստին, որ քաղաքական շահարկումների պատճառով ինչպես պառակտվեց ազգային եկեղեցին: Հիմնականում Երևանցին մատնացույց է անում Աղվանից կաթողիկոսական աթոռը, որը ամեն կերպ փորձում էր ջլատել Էջմիածնի ուժերը, և ակնհայտ էր, որ այդ պառակտողական քաղաքականության թիկունքում կանգնած էին այլադավան իշխող ուժերը, որոնց ձեռք էր տալիս հայ եկեղեցու պառակտված վիճակը, քանի որ պետականություն չունենալու բացը եկեղեցին էր լրացնում իր ծավալած գործունեությամբ:

Երևանցին գրքի տասնմեկ և տասներկուերորդ գլուխներում խոսում է Աղթամարի և Սսի հակաթոռ կաթողիկոսությունների և նրանց էջմիածնապատակա գործունեության մասին: Հեղինակը պատմական փաստերով մեկնաբանում է, թե այս կաթողիկոսությունները որքան շատ ջլատեցին Մայր աթոռի ուժերը: Այս հարցերում Երևանցին կողմ է միասնությանը՝ հակառակ Սսի և Աղթամարի կաթողիկոսությունների:

Լինելով ուսյալ մարդ՝ նա լավ էր գիտակցում և ամեն կերպ փորձում էր, միասնություն հաստատվի, որից միայն օգուտ կքաղեր հայ ազգը:

Եթե <<Ջամբո>>-ի առաջին տասներկու գլուխները, ինչպես վերը նշեցինք, վերաբերում էին հայ եկեղեցու քաղաքական պատմությանը,

այս տասներեքերորդ գլխից սկսած մատենագիրը անդրադարձել է Մայր աթոռի տնտեսական պատմությանը: Տասներեքերորդ գլխում խոսվում է այն գյուղերի մասին, որոնք տասանորդ հարկ են վճարել Մայր աթոռին: Էջմիածինը տասանորդ հարկ (մուլք) է գանձել այդ գյուղերից իրենց այգիների և ցանքատարածքների համար: Հեղինակը խոսում է Վաղարշապատ, Մաստարա, Ֆռանկանոց, Քիրաշլու, Մուղնի, Քելիշքենդ, Նորագյուղ, Դիպակլու, Նորք, Եղվարդ, Յայջի, Սելիքիգյուղ, Բաղրինձ, Բոխենիս, Մոպանիս, Ղարադոյունլու, Աշտարակ, Աղավնատուն գյուղերից ստացվող հարկերի մասին: Այստեղ նաև տեղեկություն ենք ստանում թվարկված գյուղերի տնտեսական վիճակի մասին այն ժամանակահատվածում, երբ նրանք հարկատու են եղել Մայր աթոռին: Տասնչորսերորդ գլխում հեղինակը խոսում է Էջմիածինի մաղափության մասին, որն է՝ հարկերից ազատված լինելը: Այստեղ ներկայացվում են վանքերի ենթակայության տակ գտնվող հարկատու տարածքների անշարժ գույքի հետ կապված հանգամանքներ: Հաջորդ հիկ գլուխներում Երևանցին ներկայացնում է Էջմիածինի ենթակայության տակ գտնվող և նրան պատկանող տնտեսական միջոցները: Դրանց մեջ են մտնում Մայր աթոռին պատկանող վարելահեղերը, արոտավայրերը, խաղողի այգիները, պարտեզները, ջրաղացները, ջրամբարները, խմելու և ոռոգման ջրերը, տները, խանութները և այլն:

Մատյանի քսան և քսանմեկերորդ գլուխներում հեղինակը անդրադառնում է այն հրովարտականքին և թղթերին, որոնք տրվել են Մայր աթոռին պարսից խաների և երկիրը իշխող տարբեր ուժերի կողմից: Բոլոր փաստաթղթերը, որոնք պահպանվել են Մայր աթոռում, այս գլուխներում յուրաքանչյուրը առանձին կերպով քննարկման է ենթարկվում հեղինակի կողմից:

<<Ջամբո>>-ի քսաներկու և քսաներեքերորդ գլուխներում Երևանցին անդրադարձել է Օսմանյան Թուրքիայի սուլթանների և փաշաների կողմից Մայր աթոռին հասցեագրած գրություններին:

Աշխատութեան հաջորդ քսանչորսերորդ գլխում թվարկվում են այն կալվածագրերն ու սեփականագրերը, որոնք պահվում են Մայր աթոռում:

Մատյանի վերջին գլուխը՝ քսանհինգերորդը, նվիրված է Երևան նահանգին պատկանող վանքերի վիճակին: Այս գլխում նա հեղինակը մանրամասնորեն ցույց է տալիս տվյալ վանքերի ունեցվածքի չափերը:

Միմեռն Երևանցու կողմից հեղինակած <<Ջամբո>> աշխատությունը բացի այն, որ ունի բովանդակային կարևոր նշանակություն, եզակի է նաև իր լեզվական արժեքով: Աշխատությունը հեղինակը գրել է համեմատաբար մատչելի լեզվով՝ ժամանակի զրաբարով: <<Ջամբո>>

մատյանը ունի բառապաշարային առանձնահատկություններ, որոնք կարևոր են հայոց լեզվի պատմական բառագիտության առումով:

Միմենո Երևանցու <<Ջամբո>> աշխատությունը մի նոթատետր է, որը ցույց է տալիս հայ եկեղեցու իրական պատկերը թե հավատքի և՛ թե նյութական կարողության տեսակետից: <<Ջամբո>>-ում ընդգծված կերպով երևում է, թե հայ եկեղեցին ինչպիսի ամուր սյուների վրա է կանգնած, և վերջինս ինչ կարևոր դեր ունեցավ հայ ժողովրդի համար, որը դարեր ի վեր չէր ճաշակել պետականություն ունենալու բաղձալի հաճույքը: Այդ բացասական կերպով ընդգծված բացը միշտ փորձել է լրացնել եկեղեցին՝ իր ուսերին տանելով ազգին վերաբերող բոլոր խնդիրները: Մատյանը նաև եզակի է այն առումով, որ այն արժեքավոր տեղեկատու է ապագա սերունդների համար: Այստեղ մանրամասնորեն նկարագրված է հայ եկեղեցու տնտեսական կարողությունը, նաև նշված են այնպիսի տեղանուններ, որոնք կարևոր են նաև պատմական տեսանկյունից:

7. Գիրք որ կոչի Պարտավճար: Տպագրվել է Էջմիածինի սբ. Գրիգոր լուսավորիչ տպարանում 1779 թվականին: Միմենո Երևանցու կողմից հեղինակված այս աշխատությունը պակաս կարևոր չէ բովանդակային առումով: Գրքի ստեղծման պատճառն այն է, որ հայ եկեղեցու դավանանքը առանձնացնի և անաղարտ պահի այդ դավանության կենտրոն հանդիսացող Մայր աթոռի հետ: Հայրենիքը զուրկ էր պետականությունից: Երկիրը կառավարող բոլոր ուժերը օտարակրոն էին: Ազգային եկեղեցին ապրում էր ծանր ու դժվարին ժամանակաշրջան: Բացի այն, որ այդ քառասյին ժամանակահատվածում հայ ազգին և եկեղեցուն ամեն րոպե սպառնում էր դավանափոխության զաղափարը: Այդ ընթացքում կրկին սրվեցին և զլուխ բարձրացրին դավանաբանական հին վեճերը հայ և կաթոլիկ եկեղեցիների միջև, որոնք սկիզբ էին առել դեռևս 5-րդ դարից: Երևանցին, լինելով հայ եկեղեցու առաջնորդը, գիտակցում էր, որ հայ եկեղեցու դավանաբանությունը անաղարտ պահելու սրբազան գործը պետք է ստանձնի հենց ինքը: Եվ այդ պատճառով վեճը ձեռնամուխ է լինում շարադրել այնպիսի մի աշխատություն, որում հանդես կգար հայ եկեղեցու և հավատի պաշտպանության խնդրով: Հենց այդպիսի մի գիրք հանդիսացավ <<Պարտավճար>>-ը: Իսկ գիրքը կոչեց <<Պարտավճար>>, քանի որ. <<Այս վերնագիրը բացատրվում էր այսպես: Իբրև ամենայն հայոց կաթողիկոս, Միմենոն պիտի ման գար ամեն տեղ, իր հոտի հետ խոսեր ժամանակի մեծ ցավի մասին, խրատեր ու հորդորեր ամենքին. բայց որովհետև չի կարողանում անձամբ շրջել,

ուստի իր հոստի հանդեպ իր պարտքը վճարում է այդ գրքով>>:⁶ Գրքի առաջին մասում հեղինակը հանդես է գալիս սեփական եկեղեցու պաշտպանության խնդրով:

<<Պարտավճար>>-ի հաջորդ՝ երկրորդ մասում Երևանցին ոգևորում է իր ժողովրդին և կաթողիկ եկեղեցուն միասնական ուժով հակադարձելու համար կոչ է անում առաջնորդվել ազգային ոգով, և, ինչպես պատմաբան Լեոն է ասում, <<Սիմեոնը, իբրև Արարատյան երկրի բնակիչ, ներկայացնում է արարատյան հայրենասիրությունը, մի վառ մեծագործ զգացմունք, որ հաճախ է երևան եկել մեր գրականության և կուլտուրական առաջադիմության մեջ, սկսած Ղազար Փարպեցուց: Հայ երկրի սիրտը կազմող Արարատյան երկրի շունչը, որ հայության շունչն է եղել դարերի ընթացքում, Սիմեոնի համար մարմնանում էր էջմիածնի, իբրև ընդհանուր հայությունը միացնող մի նվիրական կենտրոնի մեջ: Էջմիածինը մի պաշտամունք էր նրա համար, և նա ուզում էր, որ ճիշտ այդպիսի պաշտամունք մայր Աթոռը դառնա և ամբողջ հայության համար: Այն ժամանակ այդ համազգային պաշտամունքի հմայքն ու մեծ հեղինակությունը բավական կլինեն կաթողիկ պրոպագանդը ոչնչացնելու համար>>:⁷

8. Գիրք հանդիսութեանց տօնից կայսերականաց. շարակարգեալ ի Սիմիօնէ կաթողիկոսէ Ամենայն Հայոց Երեւանցոյ յաւելուածովք նորահիւս շարականաց և աղօթից: 18-րդ դարում հայ ազգային ազատագրական շարժման ընթացքը կապված է ցարական Ռուսաստանի հետ: Առաջին լուրջ հարաբերությունները ցարական արքունիքի հետ ծավալեց Ամենայն հայոց կաթողիկոս Սիմեոն Ա Երևանցին: Կաթողիկոսը Հայաստանի ազատագրման լուսավոր ապագան կապում էր միայն օրըստօրէ հզորացող Ռուսաստանի հետ: Այդ պատճառով 1766 թվականին Սիմեոն Երևանցին թանկարժեք նվերների հետ միասին ցարական արքունիք է ուղարկում մի նամակ, որով վեհը խնդրանք է հայտնում կայսրուհի Եկատերինա II-ին (1762-1796)թթ., որպեսզի նա իր հովանու տակ վերցնի հայ ժողովրդին: Երկու տարի անց՝ 1768թ. Հուլիսին, կայսրուհին պատասխան նամակ է ուղարկում Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոն Ա Երևանցուն, որով հավանություն է տալիս հայոց կաթողիկոսի խնդրանքին: Ի նշան երախտագիտության՝ Երևանցին 1771 թվականին գրում է (<<Գիրք հանդիսութեանց տօնից կայսերականաց>> մաղթանքը՝ նվիրելով այն Ռուսաստանի կայսերական ընտանիքին: Երևանցու կողմից գրված այս մաղթանքը կիրառության մեջ էր

⁶ Լեո, Երկ. ժող., հ.3, գիրք 2. Ե., 1973, էջ 461:

⁷ Նույն տեղում:

Արևելյան Հայաստանի, Կովկասի և Ռուսաստանի բոլոր հայկական թեմերում մինչև 1917 թվականի հեղափոխությունը:

Միմեոն Ա Երևանցու մատենագրական վաստակի մաս են կազմում նաև դեռևս անտիպ մի շարք գործեր.

- *Լուծմունք արտաքին գրոցն Պարփիւրի ներածութեան և Արիստոտէլի Ժ ստորագրութեանց և Պէրարմենիասին:*

- *Լուծմունք Դաւթի Անյաղթի եինց առածից:*

- *Մեկնութիւն բաժանման գոյից Դաւթի Անյաղթ փիլիսոփային:*

- *Լուծմունք Պրոկղի իմաստնոյ (ի վերա լուծմանն Միմեոնի վարդապետին Ջուղայեցոյ):*

- *Երկհատոր զիրս Քարոզիցս. Ջառաջինն ըստ կերպի ճառից և ներքողից, և երկրորդն տարեկան քարոզ:*

- *Ներքողեան ի վեցօրեայ արարչագործութիւնսն Աստուծոյ:*

- *Ներքողեան ի սուրբ Գրիգոր Լուսաւորիչն մեր:*

- *Ներքողեան ի սուրբ Աթոռս էջմիածին:*

- *Բանք պիտանիք:*

- *Նախերգանք քարոզից:*

- *Լուծմունք Արտաքնոց:*

- *Բանք և վկայութիւնք ի պէտս քարոզչաց:*

- *Մեկնութիւնք Յայտնութեան Յովհաննու:*

- *Ողբ աւագ ուրբաթու:*

- *Կտակ մեծի ուրբաթու:*

- *Յառաջաբանութիւն աղօթից:*

9. <<Յիշատակարան>>. Ոչ պակաս հայտնի է Միմեոն Երևանցու <<Յիշատակարան>>-ը: Վեհափառը 1763-1767թթ. Մայր աթոռի բոլոր կանտնական թղթերը նշել է այս աշխատության մեջ: Երևանցու այս աշխատանքը հրատարակվել է միայն 1894 թվականին և բաղկացուցիչ մասն է կազմում <<Դիվան հայոց պատմութեան>> Գ գրքի, որի մեջ ներառված է նաև Միմեոն Երևանցու կենսագրությունը: